ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սրբուհի Գալյանի՝ Ուկրաինա (Կիև) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Սրբուհի Գալյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ուկրաինա (Կիև), 2019 թվականի նոյեմբերի 24-26-ը ներառյալ:

Հրավիրող կողմը՝ ԱՄՆ դեսպանություն:

Գործուղման նպատակը՝ Գործնական այց Ուկրաինայի քրեական արդարադատություն իրականացնող մարմիններ՝ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում առկա փորձն ու ընթացակարգերը ուսումնասիրելու և հետագա համագործակցությունը ապահովելու նպատակով:

Քննարկված թեմաները՝ Այցի շրջանակներում քննարկվել են Ուկրաինայի ազգային հակակոռուպցիոն բյուրոյի, մասնագիտացված հակակոռուպցիոն դատախազության, ինչպես նաև հակակոռուպցիոն բարձրագույն դատարանի ձևավորման, անդամների ընտրության կառուցակարգերի, գործունեության արդյունավետության, կառուցվածքային առանձնահատկությունների և կոռուպցիայի դեմ պայքարում կիրառվող մեխանիզմների վերաբերյալ հարցերը: Քննարկվել են նաև գործնականում խնդրահարույց օրենսդրական կարգավորումները և վերոնշյալ մարմինների անկախության ապահովմանն ուղղված հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Այցի շրջանակներում կոռուպցիայի կանխարգելման ոլորտում հակակոռուպցիոն նոր մարմինների դերի և կարևորության վերաբերյալ քննարկումներ են եղել Ուկրաինայի ազգային հակակոռուպցիոն բյուրոյի տնօրենի տեղակալ Գիզո Ուգլավայի և հակակոռուպցիոն բարձրագույն դատարանի նախագահ Օլենա Տանասևիչի հետ: Կոռուպցիայի դեմ պայքարում հակակոռուպցիոն մասնագիտացված դատախազություն ստեղծելու անհրաժեշտության, հետագայում նաև այդ մարմնի անկախության ապահովման խոչընդոտների թեմայով քննարկում է եղել գլխավոր դատախազի առաջին տեղակալ Վիտալի Կասկոյի հետ: Բոլոր մարմիններում հանդիպումների ընթացքում ներկայացվել է Ուկրաինայում հակակոռուպցիոն ոլորտում բարեփոխումների ընթացքը: Մասնավորապես, հատուկ անդրադարձ է կատարվել

Հակակոռուպցիոն բյուրոյի քննիչների գործունեությանը, նրանց իրավասությունների շրջանակին, առկա էլեկտրոնային պլատֆորմներին ու գործիքներին, ինչպես նաև Կոռուպցիայի կանխարգելման ազգային մարմնի հետ համագործակցությանը:

Հակակոռուպցիոն բարձրագույն դատարանի նախագահի հետ հանդիպման ընթացքում քննարկվել է ինչպես հակակոռուպցիոն դատավորների ընտրության ընթացակարգը, այնպես էլ դատարանի կողմից քննվող հարցերի շրջանակն ու գործերի բաշխումը: Գլխավոր դատախազի առաջին տեղակալի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են մասնագիտացված դատախազների ներգրավման ու ընտրության ընթացակարգը, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով գլխավոր դատախազության կողմից իրականացվող գործողությունները:

Հանդիպում է տեղի ունեցել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, որի ընթացքում վերջիններիս ներկայացրել են իրենց գնահատականը Ուկրաինայում հակակոռուպցիոն մարմինների գործունեության արդյունավետության մասին: Այց է կատարվել նաև Ուկրաինայում Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակ:

Recoverable Signature

X

Srbuhi Galyan

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ՝ Signed by: GALYAN SRBUHI 5505920861

Սրբուհի Գալյան

29.11.19թ.